№ 57 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 29

1905

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 29 № 57

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Ապրիլի 1-ից մինչև տարվայ վերջը կարժենայ ՈՒԹԸ րուբլի։

Դիմել Тифлисъ, редакція «Мшакъ».

Այն անձինք, որոնք վճարել են մինչև ապրիլի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղօրօք յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի։

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տրամադրութիւնը Երևանում։ Թատրօն և երաժշտութիւն. Նամակ Մոսկվայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Օրվայ հետաքրքրութիւնը անցել է դէպի ծովային պատերազմը։

Այսօրվայ հեռագիրներից մեր ընթերցողները կը տեղեկանան, որ ռուսաց նաւատորմը, առաջ գնալով, մօտեցել է ճապօնական նաւատորմին։ Հաւանական է, որ շուտով թշնամի նաւերի մէջև ընդհարումներ տեղի ունենան։

Որտեղ է այժմ ռուսական պատերազմական նաւատորմը։

Սինգապուրի մօտ—այդ պատասխանն են տալիս հեռագրական հաղորդագրութիւնները։

Ինչպէս յայտնի է, Սինգապուրը մի նաւահանգիստ է, որ գտնվում է ասիական ցամաքի հարաւային ծայրում, Մալայա թերակղզու վրա, շատ մօտ Սումատրա և Բօրնէօ նշանաւոր կղզիներին։

Սինգապուրից ստացած հեռագիրը հաղորդում է հետևեալը։ Մարտի 26-ին, ցերեկվայ ժամի 2-ին նկատելի եղաւ ռուսական նաւատորմը Սինգապուրից 37 մղոն հեռու։ Ժամի $3^{1}/_{2}$-ին նաւատորմը սկսեց անցնել Սինգապուրի մօտով, ուղղութիւն պահելով դէպի Չինական ծովը։ Ռուսական նաւերը արագ շարժվում են դէպի հիւսիս և «Տարա» շոգենաւի ասելով արդէն 130 մղոն հեռու են Սինգապուրից։ Ըստ երևոյթին նրանք շտապում են դէպի ֆրանսիական Սայգօն նաւահանգիստը։

Բայց որովհետև Սինգապուրի մօտ և Մալայական նեղուցում նկատված են եղել նաև ճապօնական զինուորական նաւեր, ուստի հաւանական է թւում, որ հակառակ նաւատորմերը կրակ կը բանան միմեանց դէմ Սայգօնի շրջակայքում։

Նաւատորմերի կազմի մասին տեղեկութիւնները թերի են։ Յամենայն դէպս յայտնի է, որ ռուսական նաւատորմում զինուորական մեծ և փոքր նաւերի թիւը, «Րէյտերի» գործակալութեան ասելով՝ հասնում է 47-ի, որոնցից 6-ը զրահակիր են, 9 կրէյսեր, 8 հակա-ականնաւ և ուրիշ օժանդակ նաւեր։ Նաւատորմը առաջ է գնում ժամը 8 հանգոյց անցնելով։ Նաւերը, դասաւորված չորս-չորս մի շարքում առաջ են գնում, առանց կանգ առնելու դէպի հիւսիս։

Եւրօպական մամուլի մէջ զանազան կարծիքներ են յայտնվում այն բանի մասին, թէ որտեղ կարող են թշնամի նաւատորմերը ճակատամարտ ունենալ միմեանց հետ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ԳԱՒԱՌՈՒՄ

(Նամակ Գառնի-Բասարից)

—

Բագուի արիւնալի աղէտին արձագանք տուող Երևանի հայ-թրքական ընդհարումը մեծ յուզում առաջ բերեց մեր գաւառի մինչև վերջին օրերը հաշտ և սիրով ապրող հայ և թուրք ազգաբնակութեան մէջ։ Տարիների ընթացքում երկու հարևան ազգերի մէջ ամրապնդված խաղաղ բարեկամական կապերը յանկարծ խզվեցին և նրանք սկսեցին կասկածանքով և թշնամաբար վերաբերվել միմեանց։ Այս միջոցին հայերի հետ գիւղերում միասին ապրող թուրքերը, որտեղ փոքրամասնութիւն էին կազմում հարուստ և ազդեցիկ բէկերից և մաշադիներից շատերը, իբր թէ անապահով համարելով հայերի մօտ ապրելը, տեղափոխվեցին զուտ թրքաբնակ գիւղեր, որով չը հանդարտած մտքերը աւելի բորբոքվեցին և կասկածը շատացաւ։ Հետևանքն այն եղաւ, որ փետրվարի 25-ին Դօխկուզ գիւղի մօտ գտնվեց սպանված հայի մի դիակ, իսկ 25-ի յաջորդ օրը մի թուրքի դիակ ընկել էր Դալուլար գիւղի մօտ, պօստային ճանապարհից քիչ դուրս։

Թէ առաջին և թէ երկրորդ սպանութիւնը մի այլ ժամանակ կարող էր նշանակութիւն չունենալ ոչ այս և ոչ այն կողմի համար, մանաւանդ ընդհանրանալու ոչ մի տրամադրութիւն չէր ցոյց տայ։ Բայց Բագուի և Երևանի դէպքերից յետոյ հայերը և թուրքերը մեղադրում են միմեանց սպանութեան մէջ։ Հողը պատրաստ, ընդհարումը կարծես անխուսափելի։

Ահա, փետրվարի 26-ին, այսինքն թուրքի սպանութեան օրը, շրջակայ գիւղերից թուրքերը կազմ պատրաստ հաւաքվում են Գառնի-Բասարի կենտրոնը՝ Ղամարլու գիւղը, հայերի հետ ընդհարվելու դիտաւորութեամբ։ Հայերը տեսնելով թուրքերի անհագին թւով մտնելը, զգալով, որ փոթորիկ է գուշակվում, մանաւանդ սկզբից անզէն լինելը, խանութները փակում են և շտապով պատսպարվում են իրանց տներում։ Իսկ տեղական պրիստաւի ժամանակաւոր պաշտօնակատար Մամադբէկը, մի քանի մոլլաների հետ, շտապում է դէպի թուրքերի խմբված տեղը, առաջ խօսքով, ապա ծեծով ցրվում է զրգռված թուրք ամբոխը։

Ս. Տէր-Թովմասեան

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

(Ֆիլիպպիի «Մարդկութեան Բարերարներ» դրաման հայոց բեմի վրա։

I

Կիրակի, մարտի 27-ին, հայոց դրամատիկական խումբը ներկայացրեց Ֆիլիպպիի «Մարդկութեան Բարերարներ» դրաման երեք գործողութեամբ։ Այդ օրվայ ներկայացումը դերասան Աբէլեանի նպաստին էր։

«Մարդկութեան Բարերարներ» պիեսը առաջին անգամն էր ներկայացվում հայկական բեմի վրա։ Հասարակութիւնը հաւանեց նրան և առհասարակ գոհ մնաց ներկայացումից։

Մի քանի խօսքով հաղորդենք դրամայի բովանդակութիւնը։

Պալատական բժիշկ Ֆօրտինբախը, որ 40 տարի բժշկում է արքունիքի անդամներին և համարվում է պալատում առաջին ու հեղինակաւոր բժիշկը, անյաջողութեան է հանդիպել։ Ծերունի իշխանը հիւանդացել է, սակայն Ֆօրտինբախի բժշկութիւնից ոչ միայն չէ կազդուրվում, այլ և օրից օր աւելի թուլանում է։ Ֆօրտինբախը չէ ցանկանում ուրիշ բժշկի հրաւիրել և իր ձեռք բերած մենաշնորհից զրկվել։ Նա չէ հրաւիրում բժշկական խորհրդակցութեան նոյն իսկ իր փեսայ Մարտիուսին, որ նոյնպէս բժիշկ է և այն էլ լուրջ բժիշկ։ Ֆօրտինբախը չէ սիրում իր փեսային և այն պատճառով, որ սա ազատամիտ գաղափարների տէր մարդ է։ Բայց իշխանի որդին, Թագաժառանգ Կարլ Վիկտորը, որ ուսանողական ընկեր է եղել Մարտիուսի հետ, դիմում է սրան, խնդրելով, որ սա քննէ իր հօր հիւանդութիւնը։ Մարտիուսը քննում է և գտնում է, որ իր աները, Ֆօրտինբախը սարսափելի սխալ է գործել, հիւանդութիւնը չէ հասկացել և բժշկութեան յարմար ժամանակամիջոցը բաց է թողել, այնպէս որ իշխանի մահը դարձել է անխուսափելի։ Այստեղ ծագում է մի անտանելի դրութիւն, որ մանաւանդ ծանր է Ֆօրտինբախի աղջկայ՝ Կատերինայի համար։ Կատերինան հաւատում է իր հօրը և պաշտում է նրան իբրև մարդկային մի կատարելութեան։ Նա երկու կրակի մէջ է, ուստի ամեն ջանք է գործ դնում, որ իր ամուսինը յարմարեցնէ իր զեկուցումը այն զեկուցման հետ, որ գրել է նրա հայրը։ Բայց Մարտիուսը չէ համաձայնում փոխել իր զեկուցումից ոչ մի բառ և երկու զեկուցումները անփոփոխ ներկայացվում են Թագաժառանգին։ Հիւանդ իշխանի մահը պարզում է թէ ում կողմն էր ճշմարտութիւնը։ Ֆօրտինբախի բարոյական վարկը կործանված է։ Նրա զաւակները բացատրութիւն են պահանջում հօրից և նա ստիպված է յայտնել, որ նա ինքն էլ, թէև փոքր ինչ ուշ, հասկացել է իր սխալը, բայց փառասիրութիւնից դրդված չէ վստահացել այդ սխալը խոստովանելու։ Զը դիմանալով զաւակների յանդիմանական խօսքերին ու հայեացքներին, նա փորձում է ինքնասպանութիւն գործել, բայց նրան ազատում են մահից։

Աբէլեան կատարում էր բժիշկ Մարտիուսի դերը։ Նա բարեխիղճ կերպով ուսումնասիրել էր իր դերը և աշխատում էր բնորոշ կերպով արտայայտել երիտասարդ բժշկի խիզախ և անկեղծ բնաւորութիւնը այն տրամադրութիւններով, որոնք առաջ էին եկել կեանքի երևոյթների ազդեցութեան տակ։ Այդ բնաւորութիւնը պարտաճանաչ է դէպի գիտութեան պահանջները, անողոք է դէպի կեղծիքը և փարիսեցիութիւնը, մեղմ և փաղաքշող է դէպի մաքուր և անմեղ սրտերը։ Մարտիուսի բերանով գաղափարի ձայնն էր հնչվում բեմի վրայից և նա յաղթանակեց։ Աբէլեանին աջողվեց բնորոշ տիպը։ Մենք միայն համաձայն չենք այն բանին, որ Աբէլեան դիտմամբ ներկայացնում է Մարտիուսին բաւական կոպիտ ձևերով։ Մարտիուսը, ճիշտ է, պալատական արիստօկրատների երկրպագու չէ, ֆրակի տեղ սիւրտուկ է հագնում և իր համոզմունքներով դէմ է պահպանողական կուսակցութեան, բայց նա ամենևին կոպիտ չէ։ Աբէլեանի Մարտիուսը աւելի նման էր Ռուսաստանի զեմսկի բժշկի, քան գերմանական մի բժշկի, որի մտերիմ բարեկամներից մէկը Թագաժառանգ Կարլ Վիկտորն է։

Աբէլեան ստացաւ պսակ, բազմաթիւ թերթիկներ և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։

Պետրոսեան, Ֆօրտինբախի դերում, շատ ճիշտ էր ըմբռնել իր ներկայացրած տիպը և հաւատարիմ մնաց նրան մինչև վերջը։ Նա գեղեցիկ արտայայտեց դիրքերի այն տարբերութիւնը, որ ստեղծված է հանգամանքների շնորհիւ նրա և Մարտիուսի մէջ, յուզված սրտի համր տեսարանները, և իր հարազատների հետ հանդիպումը ճակատագրական անաջողութիւնից յետոյ։ Փոքր ինչ թոյլ անցաւ նրա բացատրութիւնը իր զաւակների հետ, բառերը և ձայնը այդտեղ աւելի յուզված և արտայայտիչ պէտք է լինէին։

Տիկին Մայսուրեան կատարեց Կատերինի դերը տիպիքական կերպով վերջին գործողութեան մէջ, իսկ առհասարակ նա չէր ամբողջացրել Կատերինի տիպը։ Ճիշտ է, ըստ երևոյթին այդ տիպը փոքր ինչ անորոշ և հարցական բնաւորութիւն ունի, բայց մենք կարծում ենք, որ հեղինակին ըմբռնած կը լինենք, եթէ ընդունենք, որ Կատերինը իր հօր իդէալացումն է։ Կատերինը իր հօր մէջ տեսնում է մեծութեան, փառքի, ազնուութեան և պատուազգացութեան մի տիպար։ Նա իր ամբողջ կեանքը անց է կացրել, հաւատալով իր հօր խելքին և տակտին։ Եւ այդ պատճառով նա իր ամուսնու մէջ չէ սիրում այն գծերը, որոնք հակասում են իր հօր կարծեցեալ կատարելութիւններին։ Եւ ահա, երբ յանկարծ ընդհարում է առաջանում նրա հօր և ամուսնու մէջ, նա անցնում է հօր կողմը այն հաստատ յոյսով, որ հայրը կը տանէ յաղթանակը։ Տիկին Մայսուրեան առաջին երկու գործողութիւններում չը ներկայացրեց Կատերինին մեր ակնարկած գծերով։ Մայսուրեանի Կատերինը մի խեղճ կին էր, սիրող իր հօրը, «երկու կողմից աւարայ»։ Նա պէտք է սկզբից հանդէս գար իբր ազնուատոհմիկ իր լաւ և վատ նախապաշարմունքներով, որ պալատական բժշկի հարազատն էր։ Վերջին գործողութեան մէջ տիկին Մայսուրեան շատ աջող էր և գործեց ուժեղ տպաւորութիւն։

Օրիորդ Ադամեան, Կատերինի քրոջ, Պաուլայի դերում բնորոշ գծերով ներկայացրեց անմեղ, չարաճճի, մաքուր բնաւորութեամբ օժտված օրիորդի։ Տիկին Զարիֆեան, ֆրէյլէյն ֆօն Րուդօլֆիի դերում, շատ ցածր էր խօսում և մենք չը լսեցինք նրա ասածները, ինչպէս և նրա խօսակիցներին առաջին տեսարանում։

Օհանեան, Թագաժառանգի դերում, Մամիկոնեան, Գուստավի դերում, Զարիֆեան, բժիշկ Կայզերի դերում, բաւարար էին։ Դերերը նիւթ չէին տալիս առանձին հետաքրքրութեան տիպեր ներկայացնելու։

Առաջին պիեսի վերջանալուց յետոյ ներկայացվեց Շիլլերի «Դօն-Կարլօս» ողբերգութիւնից երրորդ գործողութիւնը, որտեղ Աբէլեան, մարկիզ Պօզայի դերում, տպաւորութիւն գործեց թէ աջող դերակատարութեամբ և թէ այն իմաստով, որ ունեն Պօզայի ազատասիրական խօսքերը։

Այսօր, երեքշաբթի, տեղի կունենայ օր. Ադամեանի բենեֆիսը։ Մենք մի քանի անգամ առիթ ենք ունեցել խօսելու Ադամեանի շնորհքի և նրա անընդհատ առաջադիմութիւնների մասին։ Նա այժմ հանդէս է գալիս Բարբեռի «Նոր-Աշխարհ» դրամայում։

Սիրող

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

Մարտի 20 ին

Մարտի 16-ին տեղիս «Գրականա-գեղարուեստական ընկերութեան» դահլիճում պ. Ջեվելեգեան կարդաց մի շատ հետաքրքիր զեկուցում «Մամուլի ներկայ դրութիւնը» վերնագրով։ Նիւթի հետաքրքրութիւնը բաւական մեծ թւով ունկնդիրներ էր գրաւել թէ տեղական մամուլի ներկայացուցիչներից և թէ հասարակութիւնից։

Պ. Ջեվելեգեանը մօտ ծանօթ լինելով պարբերական հրատարակութեան գործին, իբրև գլխաւոր աշխատակիցներից մէկը «Рус. Вѣд.» լրագրի, առաջ ծանօթացրեց ժողովականներին 1865 թ. մամուլին վերաբերեալ հրատարակած օրէնքների հետ, և ապա թւեց, թէ տարիների ընթացքում որքան շրջաբերականներ են դուրս եկել և փոփոխութեան ենթարկել այդ օրէնքները։ Պարոնը փաստացի կերպով ապացուցեց, որ ներկայ հանգամանքներում դժուար է մի այնպիսի լրագիր հրատարակել, որը կարողանար և լրումն տալ հասարակութեան առաջադէմ դասի պահանջներին և իր շիտակ ուղղութիւնը պահպանել։ Զեկուցանողը շեշտեց, որ մանաւանդ անհամեմատ դըժուար է գաւառական լրագրութեան գործը. նա ևս առաւել ստիպված է սեղմվել և կծկվել իր մտքերը արտայայտելու մէջ։ Պ. Ջեվելեգեանը իբրև բնաբան իր զեկուցման վերցրել էր ռուս յայտնի գրականագէտ հանգուցեալ Միխայլովսկու խօսքերը, թէ «մամուլի ազատութիւնը այնքան բնական պահանջ է հասարակութեան մտաւոր առաջադիմութեան համար, որ ապացուցելը աւելորդ է, ինչպէս և հաստատելը թէ երկու անգամ երկուսը—չորս է»։

Զեկուցանողին ընդդիմախօսեցին գրակա-

Նազէտ Ս. Վ. Եարլանովսկի, Անիչկին, Խրաւաբան Վարշավսկի, Էֆրոս և «Գրականագեղարուեստական ընկերութեան» նախագահ պ. Մօնթելշտամ: Առաջին ընդդիմախօսները համարեա թէ համակարծիք էին զեկուցանողի հետ, որ ներկայ հանգամանքներում դժուար է առաջադէմ լրագրի հրատարակութեան գործը առաջ տանելը, բայց պ. Էֆրոս աշխատեց ապացուցել, որ մարդկային միտքը այնքան զօրեղ ույժ է, որ կողմնակի հանգամանքները որքան էլ ճնշեն, նա այնուամենայնիւ առաջ կերթայ, ամեն արգելքներ կը յաղթէ և իր նպատակին կը հասնէ: Պարոնը իր ասածը ապացուցելու համար օրինակ բերեց ռուսաց յայտնի երգիծաբան Շչեդրինին, որին, չընայելով միշտ արգելում էին իր ուզածի պէս գրել, իր կենդանաբար Թոյնը տարածել հասարակութեան վէրքերը բուժելու համար, բայց նա, այնուամենայնիւ, չէր ընկճվում և ընդհակառակը, առաւել խորն էր Թաթախում իր գրիչը ապականված կեանքի զանազան շերտերի մէջ և իր մտքերը առաջ մղում:

Ժողովը փակեց նախագահ Մօնթելշտամը, յայտնելով, որ հետագայ հերթական դասախօսութիւնը կարդալու է ինքը «Գրականութիւն և դատաստան» վերնագրով:

Ր. Կ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Պետերբուրգի Հեռագրական գործակալութիւնը» հաղորդում է, որ «Новое Время» լրագրի մէջ տպված է թէ կովկասեան կառավարչապետի խորհրդի անդամ Սուլթան-Կրիմ-Գիրէյ նշանակված է փոխարքայի օգնական և նրան յանձնված կը լինի քաղաքացիական մասը:—Այս լուրը մեծ գոհութիւն պատճառեց Թիֆլիսում: Սուլթան-Կրիմ-Գիրէյ մեր քաղաքում ընդհանուրի համակրանքն է վայելում իբրև վերին աստիճանի շիտակ, բարեացակամ և լուսամիտ պաշտօնեայ: Ամենքը այս բանի մէջ տեսնում են մի նոր ապացոյց, որ Կովկասի համար նոր, ցանկալի օրեր են գալիս:

—

Երևանից հեռագրում են «Тиф. Лист.» լրագրին մարտի 26-ից. «Այսօր, երեկոյեան ժամի 5-ի մօտ, բազարում, երկու տեղացիների մէջ տեղի ունեցած կռուից յետոյ, վաճառականների մէջ շփոթութիւն ընկաւ: Ամենքն սկսեցին փակել խանութները և փախչել տունը. մի քանի հրազէնք պարպվեցին. Երկուսը վիրաւորված են, քաղաքում շփոթութիւն է տիրում»:

—

Թիֆլիսի առևտրական գործակատարների գործադուլը, որ տևեց մի քանի օր շարունակ, այն հետևանքն ունեցաւ, որ մարտի 26-ին, երեկոյեան ժամը 7-ին, կայացաւ Թիֆլիսի վաճառականների խորհրդակցութիւն, որ վճռեց ընդունել գործակատարների բոլոր պահանջները մի քանի փոքրիկ բացառութիւններով: Մարտի 28-ից Թիֆլիսում բացվեցին բոլոր մագազինները: Ի դէպ. «Слово» լրագիրը հաղորդում է, որ ֆինանսների մինիստրութեան մէջ արդէն կազմված է մի օրինագիծ, որով որոշվում է թէ օրական որքան ժամ պիտի աշխատեն գործակատարները: Նոր օրինագիծը այս քանի օրերը կուղարկվի գաւառական և մայրաքաղաքների գործակատարական վաճառականական ընկերութիւններին և բօրսայի կօմիտէտներին, նրանց կարծիքներն իմանալու համար:

—

«Сынъ Отечества» լրագրի մէջ տպված է պ. Վ. Տօտօմեանցի մի գեղեցիկ յօդուածը «Հայկական կարիքներ» վերնագրով: Յօդուածի մէջ համառօտ կերպով պատմված են այն բոլոր անցքերը, որոնց ականատես են եղել հայերը 1885 Թւականից մինչև այժմ:

—

Կիրակի, մարտի 27-ին, բացվեց ֆունիկուլէօրի երթևեկութիւնը քաղաքից մինչև ս. Դաւիթ սարի գլուխը: Բացմանը ներկայ էր մեծ բազմութիւն: Վագօնները այդ լեռնային երկաթուղով արդէն գնում գալիս են:

—

Ստացանք Բագուի աղէտի զոհերի օգտին 1) Յ. Դաւթեանի ձեռքով հանգանակած 68 ր. 75 կոպէկ, 2) Արաքսեանի Թատրօնի մի խումբ Թատերասէրներից 14 ր. 95 կ., 3) Վաղիանից, Ա. Բէգլարզանեանի միջոցով, հոգեհանգստի ժամանակ հանգանակված 12 ր., 4) Տաշքենտից Միքայէլ Ծատուրեանի ձեռքով հաւաքած 308 ր. 55 կ., որոնցից 50 րուբլի Թուրքերիցն է Բագուի Մարդասիրական ընկերութեան յանձնելու համար: Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 23,270 ր. 5 կ.:

—

Ստացանք հետևեալ նոր հրատարակութիւնները. 1) Լևոն Սարգսեան—«Մի քանի օր Արցախում և Սիւնիքում», 88 եր. գինը 20 կոպէկ, 2) «Մեր էժանագին Գրադարանը» հրատ. տեկ. Զաբէլի—Ա. Լէշէէ «Ուսման Սէր», Պետերբուրգ, 1905, եր. 60, գինը 7 կոպ. և Մ. Սերաօ—«Մանկան մօտ», «Վերջին խօսք», Պետերբուրգ, 1905, եր. 88, գինը 7 կոպէկ:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ այս գարնան կը գումարվի եկեղեցական ժողով ռուս հոգևորականներից: Ժողովը կընտրէ պատրիարք, այս անգամ առանց աշխարհականների մասնակցութեան: Ռուսաց Սինօդի անդամները այս մասին մի շարք խորհրդակցութիւններ են ունեցել:

—

«Бак. Изв.» լրագիրը հաղորդում է հետևեալը. «Մի քանի ժամանակից ի վեր, մօտաւորապէս մի քանի ամիսների ընթացքում, Բագուի պօստատանը ստացվում էին տեղական Թուրքերի անունով ծանրոցներ, որոնք համեմատաբար ծանր էին, չը նայած իրանց ծաւալին և մեծ մասամբ քաշում էին 7 ֆունտ: Մանաւանդ շատ էր ստանում այդպիսի ծանրոցներ մի Թուրք, պարապմունքով ուսուցիչ: Մի անգամ պօստային այն պաշտօնեան, որ տալիս էր ծանրոցները, հարցրեց նրանից. «այդ ինչ էք բերել տալիս և ստանում էք այդքան յաճախ»: Թուրք ուսուցիչը պատասխանեց, որ դրանք մանկական խաղալիքներ են—աքաղաղներ և այլ բաներ… Եւ այսպիսի ձևով պ. մանկավարժը մի գլուխ անարգել ստանում էր իր «աքաղաղները»: Բայց անց մարտի սկզբին նորից այդ նոյն Թուրքի անունով միանգամից ստացվեցին 12 ծանրոցներ: Այս անգամ պօստատան ծառայողները կասկածներ տանելով, բաց արին ծանրոցները, կամենալով տեսնել թէ ինչ «աքաղաղներ» է այդպիսի առատութեամբ ստանում պ. մանկավարժը, և բոլոր 12 ծանրոցների մէջ երևան եկան րէվօլվէրներ փամփուշտներով: Այդպիսի «աքաղաղներով» ծանրոցներ վաղուց էին ստացվում թէ Թուրք ուսուցչի և թէ ուրիշների անունով: Պօստատան մէջ այս առիթով կազմվեց սահմանված արձանագրութիւն»:

—

Մեզ խնդրում են յայտնել, որ տպագրական գործիչների փոխադարձ ընկերութեան վարչութեան առաջին նիստը տեղի կունենայ «Тифл. Листокъ»-ի լրագրի խմբագրատանը այսօր, մարտի 29-ին: Նիստը կը զբաղվի նախագահի, գանձապահի և քարտուղարի ընտրութեան գործով: Նիստին հրաւիրվում են վարչութեան թէ անդամները և թէ փոխանորդները:

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան Թերթը, «Кавказское Сел. Хозяйство», որ լոյս էր տեսնում հինգշաբթի օրերը, որոշել է այսուհետև դուրս բերել իր համարները կիրակի օրերը:

—

Տագանրօգ քաղաքի լրագիրներում տպված է ոստիկանապետի հետևեալ յայտարարութիւնը. «Ներկայ ամսվայ առաջին օրերից մի քանի քաղաքացիներ ներկայացրել են ինձ անստորագիր նամակներ, որոնք ուղղված են հայերին և այն անձանց, որոնք որ և է յարաբերութիւն ունեն նրանց ընտանիքների հետ. այդ նամակների մէջ նախազգուշացնում են թէ հայերի ջարդ պիտի լինի: Կարծում եմ, որ սրիկաները իմ ձեռքը հասած նամակներով չեն բաւականացել: Պարզ երևում է, որ այդպիսի նամակներ շատ են տարածված: Նախազգուշացնում եմ նամակների անպիտան հեղինակներին, որ մտքեր յուզող լուրեր տարածելու համար մեղաւորները խիստ պատասխանատուութեան կենթարկվեն: Խնդրում եմ բոլոր հայերին և Տագանրօգի միւս բնակիչներին հանգիստ մնալ և համոզված, որ տեղական ադմինիստրացիան եռանդուն միջոցներ ձեռք կառնի ամեն տեսակ բռնութիւններ ճնշելու համար: Ոստիկանապետ Զապարիճ»:

—

Բագուի մէջ այս քանի օրերը տեղի ունեցաւ մի խոշոր սնանկութիւն: Գիւղացի մի Թուրք, Վէլիեվ ազգանունով, տասնեակ տարիների ընթացքում աշխատելով, մեծ հարստութիւն ձեռք բերեց. Նա ունէր բազմաթիւ շոգենաւեր, որոնց արժէքը հասնում էր միլիոնի: Այժմ այդ բոլոր հարստութիւնը, պարտքի փոխարէն, անցաւ յայտնի դրամատէր Հաջի-Զէյնալ-Աբդին Թաղիեվին և Վէլիեվը մնաց օրվայ հացի կարօտ: «Бак. Изв.» լրագիրը գրում է. «Վէլիեվը արբեցող չէ, վատնող չէ, խաղամոլ չէ, չափազանց բարի և հաւատացող մարդ է և իր բարութեան պատճառով զրկվեց իր բոլոր շարժական և անշարժ կայքերից, որոնք անցան նրա պարտատէր Թաղիեվին, իսկ նա բառի բուն նշանակութեամբ մնաց փողոցում: Երկու օր առաջ նա հագաւ սպիտակ շորեր, վերցրեց մի փոքրիկ «զէմբիլ» և իր կանանց հետ գնաց խնդրելու Հաջի-Զէյնալ Թաղիեվից մի քանի կոպէկ հաց առնելու համար: Մի կերպ կարողացան համոզել դժբաղդ Վէլիեվին, որ գոնէ մի օր յետաձգէ, հաւատացնելով, որ Հաջին այդքան անգութ չի վարվի նրա հետ նրա 35 ամեայ անխոնջ աշխատանքների փոխարէն: Մի օրից յետոյ Վէլիեվը նորից եկաւ Թաղիեվի տան մուտքի առաջ նոյն խնդիրքով. այս անգամ նա հագած էր սգի շորեր, իսկ իր կանանց նստեցրել էր սգի սաւանով ծածկած ուղտերի վրա, նմանեցնելով իր դրութիւնը Իմամի և նրա ընտանիքի ճակատագրին»: Այս մի և նոյն առիթով Բագուից հեռագրում են «Бирж. Вѣд.» լրագրին. «Երկրորդ օրն է, որ ամբոխը ցոյցեր է անում տեղացի հարուստ Թաղիեվի դէմ: Ամբոխի գլուխն է անցել շոգենաւերի տէր Վէլիեվը, որ իր սնանկութիւնը վերագրում է Թաղիեվին: Վէլիեվը իր ընտանիքի հետ սգազգեստ անց ու դարձ է անում փողոցում Թաղիեվի տան առաջ: Նրանք սպասում են ուղտերի, որոնց վրա Վէլիեվը ուզում է վերադառնալ գիւղ, որտեղից 30 տարի առաջ եկել է և մտել է Թաղիեվի ծառայութեան մէջ: Մարտի 21-ին ոստիկանութիւնը ցրեց ամբոխը»: Ի՞նչ օգուտ այդ տեսակ ցոյցերից.—կապիտալը ոչ ցեղ է ճանաչում, ոչ ազգութիւն, ոչ մանաւանդ սիրտ:

—

ՓՕԹԻԻՑ «Нов. Обоз.» լրագրին հեռագրում են. «Առաւօտեան ժամի $10^{1}/_{2}$-ին ինն զինված չարագործներ յարձակվեցին փոխադարձ վարկի ընկերութեան վրա և յափշտակեցին մօտ 15,000 րուբլի փողով և արժէթղթերով»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Տեսակցութիւն գեներալ Բատիանովի հետ: «Figaro» լրագրի ներկայացուցիչը պատմում է իր տեսակցութեան մասին գեներալ Բատիանովի հետ: Վերջինս նկատեց, որ պատերազմի ընթացքը, նրա կարծիքով, մեծ կախում ունի այժմ ծովապետ Ռօժէստվէնսկուց: Իսկ քանի որ եապօնացիները տէր կը լինեն ծովի վրա, պատերազմը չի վերջանայ, եթէ Ռօժէստվէնսկին կը ջարդէ եապօնական նաւատորմը, յաղթութիւնը ռուսները կը տանեն: Գեներալը կատարելապէս համոզված է, որ Ռօժէստվէնսկին աջողութիւն կունենայ, որի տրամադրութեան տակ գտնվող ույժերը—նրա խօսքով—գերազանցում են եապօնական նաւատորմի ույժերից: Բայց մինչև անգամ եթէ ծովապետ Ռօժէստվէնսկին ջարդվի էլ, այդ հանգամանքը յամենայն դէպս վերջ չի դնի պատերազմին,—ասաց 3-դ բանակի հրամանատարը: — Ռուսաստանը բաւարար միջոցներ ունի և կարող է երկար սպասել: Ռուսաց զօրքերը կը շարունակեն նահանջել, մինչև որ նշանաւոր օժանդակ ույժեր չը ստանան, և կը վերջացնեն նրանով, որ յետ կը մղեն եապօնացիներին դէպի Կօրէյա: Միայն այդ բոլորից կարելի է խօսել խաղաղութեան մասին: Դա արդէն կը լինի պատուաւոր խաղաղութիւն Ռուսաստանի համար, և նա ստիպված չի լինի պատերազմական որ և է տուգանք վճարել: (Спб. Вѣд.)

—«Temps» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, որ 4-դ բալտիական էսկադրան ծովը կը դուրս գայ ապրիլի սկզբին: (Нов.)

—Գեներալ Նադարօվ արգելեց խմբական փախուստը Խարբինից, որովհետև այժմ արդէն բանուորների և բանուորուհիների պակասութիւն է զգացվում:

Եապօնական լրագիրները խաղաղութեան մասին: Եապօնական լրագիրները կրկնում են Եւրոպայից և Ամերիկայից եկող բոլոր լուրերը խաղաղութեան մասին և քննութեան են ենթարկում նրանց: Սակայն, ըստ երևոյթին, այդ լուրերը ամենևին չեն ազդում Եապօնիայի և նրա ժողովրդի վերաբերմունքի վրա դէպի պատերազմը: Ընդհանրապէս եապօնական լրագիրները հաստատում են, որ Եապօնիան դիտաւորութիւն ունի եռանդով շարունակել պատերազմը: Ռուսաստանի անաջողութիւնները,—ասում է «Ջիւ-Ջի-Շիմպօ» լրագիրը,—ոչ մի ազդեցութիւն չունեն ռուսաց կառավարութեան վրա, որը չէ կարողանում հաշտվել իր պրէստիժի անկման մտքի հետ: Սակայն եապօնական բանակը կը շարունակէ արշաւումը, ոչ մի բոպէ հանգիստ չը տալով ռուսներին: «Կօկումին» լրագիրը անմիտ և անշահաւէտ է համարում պատերազմը Ռուսաստանի համար, իսկ եթէ Ռուսաստանը գերադասում է աչքերը փակել, խուսափելով բանականութեան խորհրդից, Եապօնիան օգուտ կը քաղէ նրա կուրութիւնից: «Նիչի-Նիչի-Շիմբուն» լրագրի խօսքով, Ֆրանսիան կարող էր յանձն առնել համոզելու Ռուսաստանին, որ անհրաժեշտ է խաղաղութեան բանակցութիւններն սկսել, սակայն կասկածելի է, որ Ռուսաստանը լսէր նրա խորհուրդը, որովհետև խաղաղութիւնը մահ կը լինէր բիւրօկրատայի համար, իսկ բիւրօկրատիան, ըստ երևոյթին, ինքնասպանութիւն գործելու տրամադրութիւն չունի:

(Нов.)

Բալտիական էսկադրան: Հեռագիրն արդէն հաղորդեց, որ շուտով Ջիբուտիից դուրս կը գան 16 ածխատար նաւեր հրահանգներով: Նրանք կերթան Դիէգօ-Գարսիա կամ որ և է ուրիշ տեղ կը հանդիպեն Ռօժէստվէնսկու էսկադրային: Հնարաւոր է նոյնպէս, որ էսկադրան կը սպասէ օժանդակ ույժերին կամ խաղաղութեան բանակցութիւններին, և ածխատար նաւերը նրա համար հաղորդակցութեան միակ միջոցը կը լինեն մնացած աշխարհի հետ:

Պատերազմը: Տօկիօից, մարտի 17-ից «Times» լրագրի ստացած տեղեկութիւնների համեմատ, եապօնական զօրքը և նաւատորմը եռանդով պատրաստվում են պատերազմը շարունակելու համար: Ճակատը անդադար զօրեղանում է թարմ զօրքերով. փոխադրական ճանապարհներ են շինված հիւսիսային Մանջուրիայի խորքում: Եապօնական բանակի առաջապահ մասերը հալածում են ռուսներին, որոնք նահանջում են դէպի հիւսիս, թեթև կերպով ծածկելով արևելքի ուղղութեամբ, ուր և կենտրոնանում է պատերազմի հետաքրքրութիւնը: Ռուսներն ամրացնում են իրանց պաշտպանութեան յենակէտերը Տումէն գետից դէպի հիւսիս, Խանչունի մօտ, նոյնպէս և մի քանի կէտեր երկաթուղու վրա, Նինգուտիի հարևանութեամբ:

Պարիզի «Journal» լրագիրը հաղորդում է լուր, որ իբր թէ Խարբինի հաղորդակցութիւնը Վլադիվօստօկի հետ արդէն կտրված է և երկաթուղին Կօրէյայից եկած եապօնացիների ձեռքումն է: Ասում են, որ Պօրտ-Արտուրում գրաւված ռուսական պաշարող թնդանօթները ներկայումս Վլադիվօստօկի ճանապարհի վրա են, ուր շարունակվում են պատրաստվել պաշարման համար: Քաղաքացիական հիմնարկութիւնները և բանկերը փոխադրված են Խաբարօվսկ: (Новости)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Մէշէդ, մարտի 19-ից

Մարտի 9-ին այստեղ տեղի ունեցած հակաքրիստոնէական շարժումները և խռովութիւնները ցրվեցին հէնց նոյն օրը: Կողոպտվեցին հայերի 2 տներ և մի մագազին, Լ. Զամ առևտրականի մթերանոցը, որտեղ գտնված ապրանքները ապահովագրված էին «Պարսկական փոխադրական» ընկ. կողմից: Կառավարութիւնը թէև ուշ, բայց ցոյց տուեց բաւականին եռանդ, և դրա շնորհիւ ցոյցը լայն ծաւալ չը ստացաւ, որը կարող էր աւելի բարդ հետևանքներ ունենալ: Առ այժմ առերևոյթս դադարած են թւում խռովութիւնները և հանդարտված յուզված մտքերը: Բայց արդէօք չար անձնաւորութիւնները կը դադարեն այդպիսի սև գործեր կազմակերպելուց:

Ցուցարարների պարագլուխներից ձերբակալված են մօտ 30 հոգի: Թէհրանից՝ Վեհափառ Շահը հեռագրով հրամանագրել է տեղիս նահանգապետին, որ աշխատէ և միջոցներ ձեռք առնէ քրիստոնեաների կեանքի և գոյքի ապահովութեան համար: Կողոպտված տների տէրերը ռուսական հիւպատոսարանի միջոցով իրանց պահանջներն են ներկայացրել կառավարութեան:

Չը մոռանամ յիշել, որ թէ անցեալ տարվայ Սարգվար քաղաքում և թէ այստեղ տեղի ունեցած վերջին ցոյցերի ժամանակ մեծ դեր էին խաղում Թուրքերը, որոնք ամեն կերպ աշխատում էին գրգռել տեղական պարսիկ խաղաղ ազգաբնակութիւնը քրիստոնեաների դէմ:

Թաւրիզեցի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 մարտի

Կ. ՊՕԼԻՍ։ Բացի Ֆրանսիայում ենթադրվող փոխառութիւնից, արդէն 62 միլիօն փոխառութիւն կայացաւ գերմանական խմբի մօտ, որի կէսը կը վճարվի արտիլերիական հայթհայթումների համար։ Սուլթանը այդ վերջին փոխառութիւնը հաստատող իրադէ ստորագրեց։ Ցէնզուրան հրահանգներ տուեց մամուլին դժգոհութիւն յայտնել բուլգարական կառավարութեան գործունէութեան եղանակի առիթով, որը կարծես թոյլատրել է զինաւորված չէտաների ներս խուժումը Մակեդոնիա։ —Բ. Դուռը յայտագիր ուղարկեց պետութիւններին, որով բողոքում է Կրետէի վարչութեան սիստէմի մէջ որ և է փոփոխութիւն մտցնելու դէմ։ Կարծում են, որ պատասխանները կը գոհանան վարչական աննշան փոփոխութիւններով։

ՊԱՐԻԶ։ Ոչինչ նոր բան երևան չէ հանված դաւադրութեան վերաբերմամբ։ Ոստիկանութիւնը շարունակում է խուզարկութիւններ կատարել։ Պրինց Վիկտոր-Նապոլէօն գավում է Բրիւսէլում և յայտնեց, որ բոլորովին անմասն է այդ գործին, որը նա խոշոր միստիֆիկացիա է համարում։ Լաւ աղբիւրից ստացված տեղեկութիւնների համեմատ, Էդուարդ թագաւորն կայցելէ Տանժէր։ Մարօկկօի վերաբերմամբ հարցապնդումին Դէլկասէ պատասխանեց, որ ընդհանուր կարծիքով, միջազգային համաձայնութիւնը համարվում էր նոր երաշխաւորութիւն Մարօկկօում կարգը և ապահովութիւնը վերականգնելու համար, մի երաշխաւորութիւն, որ հաւասարապէս նպաստում էր բոլորի շահերին, չը յարուցանելով նախապաշարմունքներ։ Մարօկկօի հետ բանակցութիւններ վարելով, Ֆրանսիան նկատի ունէր բացառապէս ընդհանուր սահմանը, վտանգները և զոհերը, որոնք հետևանք են անընդհատ յուզմունքների սահմանակից Մարօկկօի շրջանում, սուլթանի անզօրութիւնը և նրա խընդիրքը՝ աջակցել և խորհուրդ տալ, յոյս ունենալով, որ համաձայնութեան հետևանքը կը լինի սուլթանի միապետական իրաւունքների և անհաստատ իշխանութեան ամրացումը և ազգաբնակութեան դրութեան բարւոքումը, անձեռնմխելի պահելով նրա սովորութիւնները, հաւատալիքները և կազմակերպութիւնը։ Հարկաւորութիւն չունենալով շտապեցնելու հարցի լուծումը, մենք հանգիստ կը շարունակենք դիմել մեր նպատակին, չը ցանկանալով խախտել օտարների շահերը։ Դէլկասէի ճառից յետոյ Ժօրէս յայտնեց, որ ընդունում է իր հարցապնդումի յետաձգումը, և աւելացրեց, որ ի նկատի ունի մերձակայ ժամանակում վիճաբանութիւններ առաջացնել արտաքին քաղաքականութեան առիթով։ Ինցիդէնտը վերջացաւ։ Տամատավայից հաղորդում են, որ Մադագասկարում փչում է կատաղի ցիկլօնը։ Հեռագրական հաղորդակցութիւններն ընդհատված են։

ՆԷԱՊՕԼ։ Վիլհէլմ կայսրը երէկ երեկոյեան «Հօհէնցօլէրն» զբօսանաւով ճանապարհ ընկաւ Մէսսինա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մարտի։ Բագուի հասարակական վարչութեան պատգամաւորները՝ Իբէցկի, Թօփչիբաշէվ և Բուկաշէվ ներկայացան Կովկասի փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվին։ Ընդունելով շնորհաւորութիւններ Բագու քաղաքից փոխարքայ նշանակվելու առիթով և իմանալով գալու նպատակը, կոմսը այն համոզմունքը յայտնեց, որ Կովկասեան երկիրը, Ռուսաստանի ուրիշ շրջանների թւում, նոյնպէս հաղորդակից կը լինի հանրակայութեան ռէֆօրմներին, որպէս նա արտայայտված է իր անուան տրված Բարձրագոյն ռէսկրիպտի մէջ։ Մի և նոյն ժամանակ կոմսն աւելացրեց, որ ռէֆօրմներ մտցնելու ժամանակ Կովկասում նա յոյս ունի տեղական հասարակական ույժերի վրա։

ՍԻՆԳԱՊՈՒՐ, 26 մարտի։ «Տարա» շոգենաւով եկածները հաղորդում են, որ մարտի 25-ին, կէսօրին, նրանք տեսան 47 ռուսական պատերազմական նաւեր Մալակեան Ջրանցքում։ Էսկադրան գնում էր դէպի հարաւ։

ՄԻՆՍԿ, 26 մարտի։ Գործարանատէրերի և գործատների տէրերի խորհրդակցութիւնը կարծիք յայտնեց մտցնել տասը ժամեայ օր բոլոր գործատներում և կազմել մի մշտական յանձնաժողով բանւորների կացութեան հետ ծանօթանալու համար։

ՄԱՐՍԷԼ, 25 մարտի։ Էդուարդ թագաւորը ժամանեց առաւօտեան 9 ժամին։

ՀՌՕՄ, 28 մարտի։ Բօլգարական իշխանը մտադրութիւն ունի մի քանի օրվայ ընթացքում ծպտեալ ճանապարհորդել Իտալիայում։ Հռօմով անցնելու ժամանակ կայցելէ թագաւորին։

ՕԴԷՍՍԱ, 26 մարտի, «Կօրօլէվա Օլգա» շոգենաւով եկաւ պօրտ-արտուրցիների տասներորդ խումբը, թւով 32 մարդ։

ՄՕՍԿՎԱ, 26 մարտի։ Մօսկվայի քաղաքագլուխը նշանակված է Մեծ Իշխան Սերգի Ալէքսանդրօվիչի սպանութեան գործի քննութեան առանձին ատեանի անդամ։

27 մարտի

ՊԱՐԻԶ, 26 մարտի։ Դիպլօմատիական շըրջաններում խօսում են, որ իտալական թագաւորը պատրաստակամութիւն է յայտնել միջնորդ դառնալ մարօկկեան ընդհարման մէջ։ Հանօտօն ասում է, որ ռուս-եապօնական պատերազմի հետևանքները գծագրվեցին այժմ կատարեալ լոյսի մէջ. Ֆրանսիային մնում է ընտրութիւն՝ կամ հրաժարվել բացարձակ մօնօպօլիայից Մարօկկօում, կամ պատերազմել։ Ասում են, որ Էդուարդ թագաւորը իր ճանապարհորդութեան ժամանակ կանգ կառնէ Տանժէրում։

ԼՕՆԴՕՆ, 26 մարտի։ Հեռագիր է ստացված Սինգապուրից, որ ռուսական 15 պատերազմական նաւեր, կամաւոր նաւատորմի շոգենաւերից պատերազմական նաւերի վերածած չորս կրէյսէրներ, 14 ածխատար նաւեր և հինգ ականանաւեր անցան, առանց կանգ առնելու, Սինգապուրեան Ջրանցքը, ընթանալով դէպի արևելք։ Սինգապուրում ռուսական էսկադրան առաջ տեսան առաւօտեան 9 ժամին։ Մի հանգամանք առանձին հետաքրքրութիւն է տալիս ռուսական էսկադրայի դրութեանը. բանն այն է, որ ռուսական նաւերի առջևից, Մալակկեան Ջրանցքով անցնելու ժամանակ, գնում էին 12 կրէյսէրներ, անկասկած եապօնական խուզարկուներ ծովապետ Տօգօի էսկադրայից. այդպիսով ռուսները և եապօնացիները բաւական ժամանակ ընթանում էին միմեանց տեսնելով։ Սինգապուրի անցքը անցնելուց յետոյ ռուսական էսկադրայի բռնած ուղղութիւնից եզրակացնում են, որ էսկադրան գընում է Ֆրանսիական Սայգօն նաւահանգիստը։

ՊԱՐԻԶ, 26 մարտի։ Ծովային շրջաններում կարծում են, որ Տօգօն սպասում է ռուսական էսկադրայի Զօնդեան կամ Ֆլօրէս ջրանցքով անցնելուն և կռւի կը բռնվի Չինական ծովում։

ԼՕՆԴՕՆ, 25 մարտի։ Կարծում են, որ Սինգապուրից ստացված տեղեկութիւնը ցոյց է տալիս մարօկկեան ճակատամարտի անխուսափելիութիւնը։ Այդ դէպքը մեծ հետաքրքրութիւն է զարթեցնում։ Երեկոյեան լրագիրների արտակարգ հրատարակութիւնները առիթ են տալիս կարծելու, որ Ռօժէստվէնսկու և Տօգօի էսկադրաները արդէն հանդիպել են։ Շատ անձինք, որոնք համակրում են ռուս ժողովրդին այս պատերազմի ընթացքում նրան հալածող այսքան դժբախտութիւնների համար, յոյս ունեն, որ այս անգամ բաղդը կը դառնայ Ռուսաստանի կողմը։ Կատարելապէս հաստատվում է, որ Ռօժէստվէնսկու էսկադրան մտաւ Մալակկեան Ջրանցքը, որի պատճառով սպասվող ծովային կռիւը մի քանի ժամվայ հարց է դառնում։ Յիշում են, որ «Կասագի», «Չիտօզէ», «Հատսումարու» և «Ամէրիկամարու» պատերազմական նաւերը նկատվել են Սինգապուրի մօտ մարտի 2-ին։ Մի օր առաջ 22 պատերազմական նաւերից բաղկացած եապօնական էսկադրան նկատվել էր Խարօբուրգեան փարոսի մօտ, որ գտնվում է 48 վերստ հեռաւորութեամբ Սինգապուրից։ Այդպիսով կատարելապէս հաւանական է երևում, որ արագընթաց եապօնական կրէյսէրները արդէն շփվում են Ռօժէստվէնսկու էսկադրայի հետ։

ԲԵՐԼԻՆ, 26 մարտի։ «Vossische Zeitung» լրագրին հաղորդում են Տանժէրից, որ պաշտօնական դաշնագրով սուլթանը թոյլատրեց գերմանական նաւերին կաբօտաժով զբաղվել Մարօկկեան ծովափի վրա։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Պատգամաւորների ժողովը յանձնաժողով ընտրեց՝ երկրի քաղաքական դրութեան առիթով թագաւորին մատուցվելիք ուղերձի խմբագրութիւնը մշակելու համար։

ՄՕՍԿՎԱ, 27 մարտի։ Այսօր երեկոյեան մանկավարժական ընկերութեան նիստն էր։ Քսան աչքի ընկնող պրօֆէսօրներ յայտնեցին, որ դուրս են գնում ընկերութիւնից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Новое время» լրագիրը հաղորդում է, որ մօտերս, մինչև Զատիկը, ներքին գործերի մինիստրութիւնը կը հրատարակէ հաղորդագրութիւն՝ օրէնսդրական աշխատանքների մէջ ժողովրդական ներկայացուցիչների մասնակցութեան վերաբերմամբ ներքին գործերի մինիստրի նախագահութեամբ առանձին խորհրդակցութիւն գումարելու նախապատրաստական աշխատանքների մասին։ Ստացված տեղեկութիւնների համեմատ, ներքին գործերի մինիստրութիւնը ոչինչ կարգադրութիւն չէ արել, որ զեմստվօի և քաղաքային ինքնավարութիւնների քննութիւնից հանվեն այն հարցերը, որոնք կապված են փետրվարի 18 ի Բարձրագոյն ռէսկրիպտի հետ ժողովրդական ներկայացուցիչների մասնակցութեան մասին օրէնսդրական աշխատանքներում, որովհետև այդպիսի հարցերի քննութեան իրաւունքը, Բարձրագոյն ուկազի համեմատ Կառավարիչ Սենատին, պատկանում է ժողովներին և մասնաւոր անձանց, և եթէ Օրլօվի նահանգապետն արել է մի այդպիսի կարգադրութիւն, թէպէտ և մինիստրութեան մէջ դրա մասին տեղեկութիւն չը կայ, այդ կարգադրութիւնը մասնաւոր բնաւորութիւն էր կրում։ Անհիմն են նոյնպէս և այն լուրերը, թէ Տուլայի նահանգապետն ևս դուրս է հանել քննութիւնից այդպիսի հարցերը։

ԼՕՆԴՕՆ, 27 մարտի։ Ծովային ապահովագրութեան էկսպէդիտօրները և գործակալները երկիւղ են կրում, որ եթէ Ռօժէստվէնսկուն աջողվի խուսափել Տօգօի էսկադրային հանդիպելուց, այն ժամանակ նա շատ վնաս կը հասցնէ չինական ծովափին, ուր այժմ գտընվում են շատ նաւեր բրնձով և այլ մթերքներով, որոնք գնալու են Րանգունից, Սայգօնից և այլ նաւահանգիստներից Եապօնիա։ Որովհետև ներկայ հանգամանքներում Ռօժէստվէնսկին չէր կարող իր ձեռքում պահել բռնված նաւերը, այդ պատճառով երկիւղ են կրում, որ նա ջրասոյզ կանէ նրանց։ Այստեղ աշխատում են բացատրել այն հանգամանքը, որ ռուսական էսկադրան այդքան մօտ է գնում ափից երևի նրանով, որ ռուսները ցանկութիւն ունեն միայն երեք մղոնեան չերտի սահմաններում և խուսափել այդպիսով լողացող ականների անսպասելի յարձակումից։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 26 մարտի։ Ծովն իջեցրին 16,000 տօնն ունեցող «Միննէզօտա» զրահակիրը։

ՊԱՐԻԶ։ Լուբէն ընդունեց Կօննաուտեան դքսին և դքսուհուն երկու դուստրներով։ Նախագահն իսկոյն և եթ փոխ-այցելութիւն տուեց։

ՄԷՍՍԻՆԱ։ Առաւօտեան ժամանած Վիլհէլմ կայսրը դիմաւորվեց կայսրուհուց։

Կ. ՊՕԼԻՍ։ Թիւրքերը չեն ծածկում իրանց գոհունակութիւնը գերմանական կայսրի Մարօկկօում կատարած ճանապարհորդութեան առիթով, իսլամի հովանաւոր համարելով Վիլհէլմին։ Սուլթանը ստորագրեց հրովարտակ, որով արգելվում են հնագիտական փորուածքներ օսմանեան հողի վրա։ Ստորագրված է իրադէ Ֆրանսիական խմբի հետ համաձայնութիւն կապելու վերաբերմամբ փոխառութեան մասին։

27 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ինֆանտէրիայի գեներալ Լինևիչի հեռագիրները Նորին Կայսերական Մեծութեան անունով 1905 թւի մարտի 25 ից. 1) Կէս գիշերվայ 8 ժամ 20 րօպէին. «Բանակներում փոփոխութիւններ չը կան։ Մեր զօրաբաժիններից մէկը մարտի 23-ին հասաւ մինչև Ձանտուֆու քաղաքը, առաջացնելով հակառակորդի կրակը»։ 2) Կէսօրից յետոյ 2 ժամին Տսյպիլինի մօտ մեր առաջապահ հեծեալ զօրամասը յարձակում գործեց եապօնական խուզարկու զօրամասի վրա։ Կարճատև ընդհարումից յետոյ եապօնական 20 դրագուններ և մէկ վիրաւոր օֆիցէր գերի վերցվեցին. Մնացածները կոտորվեցին։ Կորուստներ մենք չունէինք»։

Նորին Կայսերական Մեծութեան հեռագիրը ինֆէնտէրիայի գեներալ Լինևիչին 1905 թւի մարտի 25-ին. «Սրտանց ուրախ եմ, որ չորրորդ հրացանաձիգ բրիգադայի գնդերը եւ նրա արտիլերիան մտնում են իրանց դիրքերը այն փառաւոր տեսքով, որով նրանք սովոր են միշտ երեւալ։ Համոզուած եմ, որ նրանք քաջութեամբ կը պաշտպանեն երկաթէ բրիգադայի պատերազմական փառաւոր աւանդութիւնները։ Նիկոլայ»։

Բարձրագոյն հեռագիրն ուղարկված է ի պատասխան հետևեալ ամենահպատակ հեռագրի ինֆանտէրիայի գեներալ Լինևիչից մարտի 23 ից. «Այսօր տեսայ շոգենաւի վրա չորրորդ հրացանաձիգ երկաթէ բրիգադայի քաջարի գնդերը, որոնք գնում էին իրանց ռազմական տեղերը։ Երջանիկ եմ վկայել Ձեր Կայսերական Մեծութեան առաջ, որ բրիգադայի ներկայ կազմը փառաւոր է և բոցավառ ցանկանում է պաշտպանել իր հայրերի փառքը և անունը։ Ամբողջ բրիգադան խնդրում է ինձ արկանել առ ոտս Ձեր Կայսերական Մեծութեան նրանց սիրոյ և հաւատարմութեան անսահման զգացմունքները դէպի Գահը և այժմ ևս պատրաստ են մանջուրական բանակի շարքերում ծառայել նոյն հաւատով, որպէս ծառայում էին իրանց հայրերը»։

Նորին Կայսերական Մեծութեան հեռագիրը գեներալ-ադիւտանտ Կուրօպատկինին 1905 թւի մարտի 26 ից. «Անկեղծ յուզված եմ ինձ եւ իմ Ընտանիքին Սիբիրեան տասն եւ մեկերորդ եւ տասն երկուերորդ գնդերի կողմից արտայայտած զգացմունքներիցեւ սրտանց շնորհակալ եմ։ Ինձ ուրախալի է լսել, որ առաջին մանջուրական բանակի զօրքերի պատերազմական ոգին եւ ապագայ աջողութեան ու թշնամուն յաղթելու նրանց համոզմունքը մնում են ամուր եւ անյողդողդ։ «ՆԻԿՈԼԱՅ»։

ԿԱԶԱՆ։ Բժիշկների արտակարգ նիստը Կազանի համալսարանում առանձին յանձնաժողով ընտրեց խօլերայի դէմ կռւելու հարցի վերաբերմամբ նիստում առաջարկած միջոցների մշակութեան և գործնական իրագործման համար։ Ցանկութիւն է յայտնված ձեռնարկելիք միջոցները կենտրօնացնել զեմստվօի և քաղաքի ձեռքերում։ Որոշված է Պիրօգօվեան համաժողովի հրատարակած բրօշիւրը խօլերայի մասին թարգմանել երկրի թաթարական և այլացեղների լեզուներով։ Դումայի սանիտարական յանձնաժողովը որոշեց միջնորդել կառավարութեան առաջ, որպէս զի քաղաքին 40,000 ր. նպաստ տրվի խօլերայի դէմ կռւելու համար։

ՈՒԼԷԱԲՕՐԳ։ Տօնախմբվեց քաղաքի երեք հարիւրամեակը։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Անգլիական տեղեկութիւնների համեմատ, Եապօնիան պատուիրեց հինգ հարիւր հազար հրացանային կոթեր Եօվայի շտատում։

ՊԱՐԻԶ։ Դաւադրութեան մասին Պարիզում ոչինչ նոր բան չէ բացված։ Պօլիցիան շարունակում է քննութիւնը։

ՄԱԴՐԻԴ։ Այստեղ փլվեց 500,000 կուբիքական մէտր բովանդակութիւն ունեցող ջրանբարը։ Աղէտի ժամանակ աշխատում էին 436 բանւորներ. կարծում են, որ սպանված են 235 մարդ։ Թագաւորն անձամբ հսկում է վիրաւորներին փրկելու համար եղած աշխատանքներին։

ՄՕՍԿՎԱ, 28 մարտի։ Մօսկվայի վրայով Րիգայից Սևաստոպոլ անցաւ Մաքսիմ-Գօրկին։

ԲԷԼԳՐԱԴ, 27 մարտի։ Երէկ կաֆէում մի օֆիցէր դաւադիրներից՝ Վէմիչ, որը առաջին հարուածը հասցրեց թագուհուն, յանկարծ մերկացրած սրով ետևից յարձակվեց «Նարօդնի Լիստի» լրագրի խմբագիր Շիբալիչի վրա, ցանկանալով վրէժ լուծել վերջինի տպած յօդուածի համար։ Շիբալից գրպանից դուրս հանեց ռէվօլվէր և ստոր արարած անուանեց օֆիցէրին։ Վէմիչ փախաւ հալածվելով, կատաղած հասարակութեան զայրոյթով լի աղաղակներով։

ՄԻՆՍԿ։ Նահանգական ատեանը վերացրեց դումայի որոշումը այն յանձնաժողովի ընտրութեան մասին, որը իրաւունք պէտք է ունենար հրաւիրելու քաղաքի ներկայացուցիչներին խնդրագիր մշակելու համար երկրի կարիքները, ժողովրդի բարօրութիւնը բարւոքելու և պետական կազմը կատարելագործելու մասին համաձայն փետրվարի 18-ի Բարձրագոյն ուկազի։

ՊԱՐԻԶ։ Բրէստի քաղաքային վարչութիւնը, որը պատկանում է սօցիալիստների կուսակցութեանը և որը չէ համակրում ֆրանս-ռուսական դաշնակցութեան գաղափարին, վճռել է անսովոր հանդիսաւորութեամբ դիմաւորել անգլիական էսկադրային, որին գլուխ կանգնած կը լինի Բատտէնբէրգեան Լուի պրինցը։ — Գիբրալտարի անգլիական իշխանութիւնները խիստ միջոցներ ձեռք առան գերմանական օֆիցէրների հետաքրքրութեան դէմ, որոնք եկել են Վիլհէլմ կայսրի Գիբրալտարի այցելութիւնից առաջ։ Որովհետև դիմադրական կուսակցութիւնը դիտմամբ ձգձգում է եկեղեցին բաժանելու նոր օրէնքը, մինիստրը առաջարկեց բուէարկել այդ օրէնքի մտցնելու անյետաձգելիութեան հարցը։—Պատասխանելով խորհրդարանական ցուցահանդէս բանալու ժամանակ ողջոյնի ճառին, Լուբէն հասկացնել տուեց, որ ինքն յոգնել է և չէ ցանկանում նորից ընտրված լինել նախագահ, սակայն աւելացրեց, որ որ և է քաղաքական բարդութիւնների կամ այժմ բացվածի նման դաւադրութեան դէպքում, նա պատրաստ է զոհել իր հանգստութիւնը և չի թողնի իր պաշտօնը։

28 մարտի

ՏՕԿԻՕ, 27 մարտի։ Մալակեան ջրանցքում բալտիական նաւատորմի երեւալու տեղեկութիւնը այստեղ մեծ յուզմունք առաջացրեց։ Բոլորը յոյս ունեն շուտափոյթ և վճռական ճակատամարտի վրա։

ԼՕՆԴՕՆ, 27 մարտի։ Ռօժէստվէնսկու և Տօգօի էսկադրաների մասին առ այժմ ճիշդ յայտնի չէ։ Կարծում են, որ երկու-երեք օրից վաղ պատերազմ տեղի չէ կարող ունենալ։ Ծովային քննադատների կարծիքով, առաջիկայ ծովային պատերազմը ամենալուրջ կռիւը կը լինի պատմութեան մէջ Տրաֆալգարի մօտ եղած կռւից յետոյ։ Հնարաւոր է, որ Տօգօն այժմ կռւի չը բռնվի այն պատճառով, որ նա չունի րէզէրվ, որի վրա կարողանար յոյս դնել այն դէպքում եթէ մի քանի զրահաւոր կորցնէ, այլ կընտրէ տակտիկա՝ անընդհատ յարձակումներ գործելու ականաւորներով Ռօժէստվէնսկու վրա այն նպատակով որ ոչնչացնէ ածխատար նաւերը և ռուսաց նաւատորմը զրկէ ածուխ ստանալու հնարաւորութիւնից։

ՀՕՆԳԿՕՆԳ, 26 մարտի։ Անգլիական «Միստլի» կրէյսէրը յանկարծ դուրս եկաւ։ Ասում են թէ նա հրաման է ստացել արագ ընթացքով գնալ դէպի հարաւ։ Նրան ուղեկցում են «Գլօրի» և «Օկէան» զրահակիրները և «Իֆիգէնիա» կրէյսէրը։

ՊԷՆԱՆԳ, 27 մարտի։ Անգլիական «Թէտիս» կրէյսէրը յանկարծակի կանչվեց Սինգապուր։

ԼՕՆԴՕՆ, 27 մարտի։ Շարունակվում են ստացվել մանրամասնութիւններ Հնդկաստանում տեղի ունեցած երկրաշարժի սարսափելի հետեանքների մասին։ Պէնգապում Պալամպուր քաղաքը կործանված է բոլորովին, որի ժամանակ զոհ գնացին մի քանի հարիւր մարդ։ Ինքը փոխարքան ստիպված էր պալատից հեռանալ, որովհետև շինութիւնը ենթարկված էր վտանգի։ Կանգրա քաղաքում կործանումը սարսափելի է։ 4700 բնակիչներից սպանված են աւելի քան 4000 մարդ։ Կենդանի մնացած մի քանի հարիւր հոգին սարսափահար փախան։

ՏՕԿԻՕ, 27 մարտի։ Մօտ օրերս Լաօեանում մահվան պատժի ենթարկվեցին մի քանի չինացի աւազակներ, որոնք օգնում էին ռուսաց հեծելազօրին կատարած արշաւանքի ժամանակ։

ՆԻՒ-ՉԺՈՒԱՆ։ Բազմաթիւ աւազակներ և չինացի զինւորներ կենտրոնանում են Ցիցիկարում և հիւսիս-արևմուտքում։ Ենթադրըվում է, որ նրանք մտադիր են քանդել երկաթուղին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-լէյտէնանտ Խարկեվիչի հեռագիրը գլխաւոր շտաբին 1905 Թւի մարտի 26-ից։ «Բանակում փոփոխութիւններ չը կան»։

ԼՕՆԴՕՆ, 27 մարտի։ «Դէյլի-Տէլէգրաֆը» առաջնորդող յօդուածում ասում է. «Մենք չենք կարող ժխտել հիացմունքի զգացումը, որ լցնում է մեզ Թագաւոր Կայսրի գոռոզ մերժումը՝ ընդունել Ռուսաստանի պարտութիւնը. դաժան կռւից յետոյ Ռուսաստանը, թէպէտև յաղթված, այնուամենայնիւ չէ ծունկ չոքում յաղթողի առաջ։ Մինչև անգամ այժմ յաղթութիւնը ծովի վրա՝ ճապոնական բանակները վտանգաւոր դրութեան մէջ կը դնէր և թոյլ կը տար ռուսական գեներալներին՝ նոր ույժեր կենտրոնացնել նոր կռիւ սկսելու համար։ Բալտիական նաւատորմի անցնելը Մալակայի նեղուցով՝ մեծ քաջագործութիւն է Ռօժէստվէնսկու կողմից, որ ցոյց տուեց իրան իբրև շատ տաղանդաւոր ադմիրալ, որ անծանօթ ջրային անապատներով անվտանգ անցկացրեց իր նաւատորմը»։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 28 մարտի։ Ռուզվէլտը աշխատելով նպաստել խաղաղութեան բանակցութիւնների սկսվելուն՝ գործում էր դրդված ոչ միայն մարդասիրական զգացմունքից։ Միացեալ Նահանգները անհանգստութեամբ դիտելով Ճապոնիայի զօրանալը իբրև Հեռաւոր Արևելքում տիրապետող տէրութեան, վախենում են, մի գուցէ Ճապոնիայի տիրապետող ազդեցութիւնը վնասակար դառնայ Միացեալ Նահանգների շահերին ինչպէս քաղաքական, նոյնպէս և առևտրական տեսակէտից։ Կառավարութեան անդամներից մէկը անկեղծութեամբ յայտնեց «Մօրնինգ Պօստի» թղթակցին. «Մենք նախ և առաջ ցանկանում ենք վերականգնել Հեռաւոր Արևելքում հաւասարակշռութիւնը, որպէս զի ոչ մի պետութիւն այնտեղ չօգտվէր տիրապետող ազդեցութեամբ ի վնաս միւսների։ Ճապոնիայի տիրապետութիւնը Չինաստանի վրա նոյնքան վտանգաւոր է՝ որքան և Ռուսաստանինը։ Մենք չենք կարող անտարբեր նայել այսպիսի տիրապետութեան վրա, և պէտք է յուսալ, թէ հաշտութեան պայմաններ առաջարկելիս Ճապոնիան չափաւորութիւն ցոյց կը տայ և մանաւանդ չի պնդի որ Վլադիվօստօկը իրան տրվի, որով հաւասարակշռութիւնը վերջնականապէս կը խախտվէր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Արտիստական ընկերութեան թատրոնում
Երեքշաբթի, մարտի 29-ին
Հայոց դրամատիքական ընկերութեան խումբը
ի նպաստ օր. Ադամեանի
կը ներկայացնէ առաջին անգամ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ

դրամ. 4 գործ. հեղ. Բարետի, Թարգ. Ազուլեանի։

Մասնակցում են. օր. օր. Ադամեան, Արուսեակ. տ. տ. Ազնիւ, Զաբէլ, Զուիֆեան, Թաշճեան, Մայսուրեան, Մէլիբեան, Նոնիկեան, Վարդուհի. պ. պ. Աբէլեան, Աղէլխանեան, Ազգեան, Անդրանիկ, Զարիֆեան, Մամիկոնեան, Միրազեան, Յարութիւնեան, Պետրոսեան, Ռշտունի, Տէր-Առաքելեան, Տէր-Դաւթեան և Օհանեան։

Սկիզբն է ժամը 8-ին երեկոյեան։
Տեղերի գները բենեֆիսային են։

— —

Հետևեալ ներկայացումը, մասնակցութեամբ տիկ. Սիրանոյշի, կը կայանայ հինգշաբթի, մարտի 31-ին, ի նպաստ պ. Պետրոսեանի—ՇԷՅԼՕԿ կամ ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ, դրամ. 5 գործ. հեղ. Շէկսպիրի։
Տոմսակները ծախվում են թատրոնի կասսայում առաւօտեան ժ. 10-ից մինչև 2-ը և երեկոյեան ժ. 6-ից։
Րէժիսսեօր՝ Յ. Աբէլեան
Հերթապահ անդամ վարչութեան՝
Պ. Դօլուխանեան

Թիֆլիսի Ժողովարան

Ուրբաթ, ապրիլի 1-ին ժողովարանի անդամների և կանդիդատների համար ցոյց կը տրվի Պարիզի յայտնի էլէկտրական ՑՕԼԱՑՈՒՑԻՉ (կատարելագործված սինեմատօգրաֆ)։ Տեղերի գները 1 րուբլուց մինչև 30 կոպ.։ Հիւրերը մուտքի համար վճարում են 1 րուբլի։ Տոմսակները ծախվում են շվէյցարի մօտ։
(ե. ռ.) 1—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Տեղափոխվելով Թիֆլիսից ՌՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ռ. կ. ե. հ.) 100—100

Բժիշկ Ա. Միրիքարեանց
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանօնի, դեղատան կից։ (տ. օ.) 46—80

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեանց
ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6։ Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, յուսանկար Լալայեանցի բնակարան։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Ա. Ստեփանեան
Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7. Վելեամինովսկայա փ. № 8.

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փողոց № 8։ (ե. ռ.) 68—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՂԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիտիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեօնովսկայեա փ. № 20.
(ռ. կ. ե.) 28—30

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼԷՕ
ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ
Պատմական վէպ (Երկրորդ տպագրութիւն)
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՕՊԷԿ
Գումարով առնողներին՝ զեջում կը լինի։
Ծախվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում և հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը։
Պահեստը «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։

Շարունակվում է բաժանորդագրութիւն
1905 թ.
„ՄՈՒՐՃ"
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
Բաժանորդագրութիւնը Ռուսաստանում 10 րուբլի։ Արտասահմանի համար 12 րուբլի։
Գիւղական քահանաների, գիւղ. ուսուցիչների և միջնակարգ դպրոցների աշակերտների համար տարեկան բաժանորդագինն է 8 րուբլի Ռուսաստանում։ Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
1905 թ. բաժանորդներին տրվելու է իբրև յաւելված Ա. Մօրիէրի՝ «ՀԱՋԻ ԲԱԲԱՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ» հռչակաւոր վէպը։
Բաժանորդագրութիւնը ընդունվում է.—Թիֆլիսում. 1) Խմբագրատանը (Ծավճավաձեան փողոց, № 16. 2) Գուտտենբէրգ գրավաճառանոցում։
Կայսրութեան այլ տեղերից դիմում են. Тифлисъ, редакція „Мурчъ".
Արտասահմանից. Tiflis, Rédaction de la revue «Mourtch.» 3—5

Շարունակվում է բաժանորդագրութիւնը
ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ
Նկարազարդ կիսամսեայ հանդէսի
(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ (1904—1905)
Աշխատակցութեամբ Թիֆլիսի, գաւառների և արտասահմանի շատ բժիշկների
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԱՄԵՆ ՏԵՂ
Տարին—2 ր. 50 կոպ. (Արտասահման 8 ֆրանկ).
Կէս տարին—1 ր. 75 կոպ. Երեք ամիսը—1 ր.
Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները իրանց յաւելուածներով։
Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Բաժանորդագրական տարին հոկտեմբերից հոկտեմբեր է։
Անցեալ (1903—1904) տարվայ մնացած համարները (№ 7-ից մինչև 24) իրանց յաւելուածներով արժեն բաժանորդների համար 1 րուբլի։
Օտար քաղաքներից դիմում են. Тифлисъ, редакція «Арогджапаик Терт» կամ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ».
Արտասահմանից. Tiflis, Rédaction de la Revue «Arogdjapaik Tert».
3—3 Խմբագիր-հրատարակիչ Դ-ր Վ. Արծրունի

Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնագործութեան ընկերութեան
ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵՒ, ԿԱՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրօխօդներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԱՒ վաճառատներում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
СОП
С.ПЕТЕРБУРГЪ.
Խնդրվում է ուշք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա։

„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԷԼԷՐ"
Առևտրական տան պահեստում կայ ընտրութեան համար մեծ քանակութեամբ ռուսական եւ արտասահմանեան արդիւնագործութեան
ԿԱՃՈՒՉԵՂԷՆԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ
Տէլէֆօն № 346. 81—49 Երևանեան հրապարակի վրա։

Дозволено цензурою. Тифлисъ, 28-го Марта 1905 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ". Мад. ул. №15